

Գեներային միջոցառումներ

- **09.04.-12.04.2013թ.թ.** Հրազդան մարզային երիտասարդական կենտրոն - Եվրոպական միության, Միավորված ազգերի Զարգացման Ծրագրի աջակցությամբ և ՀՀ տարածքային կառավարման նախարարության հետ սերտ համագործակցությամբ Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի կողմից <<Մասնակցային, պատասխանատու և գեներային հավասարության սկզբունքներին խարսխված կառավարման վերաբերյալ տեղական իշխանությունների կարողությունների ու գիտելիքների զարգացում>> ծրագրի շրջանակներում կազմակերպված սեմինար: (Ա.Պետրոսյան, Ն.Խչոյան, Հ.Հալաբյան)
- **09.04.2013.թ** - Հայաստանի ազգային գրադարանում <<Լավագույն համայնք՝ գեներային հարցերի լուծման ուղղությամբ >> մրցանակաբաշխություն:
- **26.04.2013թ.** Հայաստանի ամերիկյան համալսարանի բիզնես կենտրոն - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ 2012-2013թթ. իրականացրած <<Ընտանեկան բռնության գոհ դարձած կանանց տրամադրվող ծառայությունների բարելավումը ՀՀ-ում>> ծրագրի արդյունքների ամփոփում:
- **30.04.2013թ.** - Գեներային հավասարության, ավանդական և արդի ընտանիքների սոցիալ-բարոյական հիմնախնդիրների մասին/տարածքային խորհրդակցություն/:
- **15.05-16.05.2013թ.** - <<Կանանց քաղաքական մասնակցությունը 2012թ. խորհրդարանական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում>> ծրագրի շրջանակում ԵՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի կողմից կազմակերպված սեմինար <<Լիդերության խթանումը՝ որպես կանանց քաղաքացիական և քաղաքական մասնակցության ակտիվացման նախադրյալ>> թեմայով:
- **22-23.05.2013թ.** <<Լավագույն համայնք՝ գեներային հարցերի լուծման ուղղությամբ>> ՀՀ վարչապետի մրցանակաբաշխության հայեցակարգի և 2013թ արդյունքների ամփոփագրի ներկայացում :(տարածքային խորհրդակցություն)
- **11.06.2013թ.** - Մարզպետարանում ստեղծված գեներային հարցերով մշտական հանձնաժողովի նիստ, ներկայացուցիչների կարողությունների գնահատում, վերջիններիս վերապատրաստումն իրականացնելու նպատակով
- **12.06.2013թ.** - **ք.** Չարենցավան, <<Մասնակցային, պատասխանատու և գեներային հավասարության սկզբունքներին խարսխված կառավարման վերաբերյալ տեղական իշխանությունների կարողությունների ու գիտելիքների զարգացում>> ծրագրի շրջանակներում կազմակերպված քննարկում
- **19.06.2013թ.- ք.** Չարենցավան, <<Մասնակցային, պատասխանատու և գեներային հավասարության սկզբունքներին խարսխված կառավարման վերաբերյալ տեղական իշխանությունների կարողությունների ու գիտելիքների զարգացում>> ծրագրի շրջանակներում կազմակերպված հանրային քննարկում:
- **17.09.2013թ.** - Մարզպետարանում ստեղծված գեներային հարցերով մշտական հանձնաժողովի նիստում քննարկվել է գեներային քաղաքականության ներդրման մեթոդական ուղեցույց մշակելու ձեռնարկի նախագիծը՝ նախատեսված ծառայելու գործնական ուղեցույց Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմիններին:
- **27.09.2013թ.** - Մարզխորհրդի նիստ՝ ՀՀ-ում գեներային քաղաքականության իրականացման խնդիրների և համայնքային մակարդակում հետագա անելիքների մասին :
- **28.09.2013թ.** - <<Իրավական տեղեկատու կանանց համար>> երկրորդ լրամշակված հրատարակությանը նվիրված կլոր սեղան՝ կազմակերպված <<Ժողովրդավարության և իրավունքի կենտրոնի>> ՀԿ-ի ու <<Միջազգային համագործակցության գերմանական ընկերություն>> ՍՊԸ-ի կողմից: